Պարույր Սևակ

Անուղղելին

Ես զբաղված եմ քո պակասները լրացրնելով,
Արբունքահասիդ նորի՛ց ու նորի՛ց վերածրնելով:
Ամենից առաջ՝ անունդ եմ փոխում. օտա՛ր մի անուն,
Իսկ ինքրդ՝ այնքան հա՛յ ու հարազա՛տ; Եվ չեմ հասկանում,
Թե այսքան տարի ինչպե՞ս ես եղել դեռ անչափահաս,
Եթե ես վաղո՛ւց սպասել եմ քեզ ա՛յս տեսքով ահա:
Հետո՝ ուզում եմ ուզածրս անես առանց իմ խոսքի:
Ուզում եմ նաև հանել մի առու մազերիդ հոսքից
Ու տանե՛լ-տանե՛լ, իմ տանջված-խանձված երեսին կապել:
Ուզում եմ նաև մատներիդ տեսքով նոր մոմեր թափել,
Այսինքն՝ լամպեր, որ պիտի լույս տան գիտե՞ս մենակ ում.
Լոկ սիրողների՛ն, և այն էլ միայն գողտրիկ սենյակում:
Եվ հոնքերիդ եմ կեռություն տալիս,
Ու սրունքներիդ՝ քիչ իլիկություն,
Մեջքրդ թողնում եմ այնպես, ինչպես կա,
Իսկ ամբողջ մարմնիդ՝ մի՛ քիչ լիքություն:
Փոխում եմ նաև... Շա՛տ բան եմ փոխում ու սրբագրրում.
Ավելին՝ ջնջում, պակաս-թերատին տալիս եմ լրում:
Շա՛տ բան եմ ուղղում, շատ ու շատ բան էլ դեռ ուղղե՛մ պիտի,
Բայց ձեռք չեմ տալիս ու ձեռք չեմ տալու... լոկ քո ժպիտին:
Ա՛խ այդ ժպիտը, այդ անուղղելի՛ն, որով ժպտալիս

Քո եղած-չեղած պակասներն ես դու մոռանալ տալիս...

27.I.1962թ.
Երևան